մի քանի անգամ եղել են գաղտնի ժողովներ, ուր հաւաքւում էին տիրամօր վանքի վանահայր Կարապետ հայր սուրբը, իմ քեռի Պետրոսը, մի մեծ քուրդ իշխան եւ ուրիշ մի քանի մարդիկ, որոնց չէ ճանաչում: Յայտնեց, թէ ինքը մի քանի անգամ ծածուկ լրտեսել է նրանց խօսակցութիւնը, թէեւ բոլորը չէ հասկացել, բայց այսքանը իմանում է, որ նրանք խօսում էին որսորդ Աւօյի, Կարօյի եւ նրա ընկերների մասին «շատ վատ բաներ», եւ մտածում էին, թէ ի՞նչ հնարքով նրանց բռնել տան, ոչնչացնեն, որ «երկրի խռովութիւնը հանդարտոի»...

— Լաւ, նրանք ինչո՞վ են մեղաւոր, — կտրեցի ես Սօնայի խօսքը, բոլորովին շփոթելով:

— Ես չեմ իմանում, Ֆարհատ, — պատասխանեց Սօնան նոյնպէս վրդովուած ձայնով: — Ասում են՝ նրանք չար մարդիկ են, աւազակներ են, ուր որ գնում են, այնտեղից արիւնը եւ կոտորածը պակաս չէ լինում...

— Ես չեմ հաւատում, Սօնա :

— Ես էլ չեմ հաւատում, բայց ի՞նչ անես, ասում են, չեմ կարող ասողի բերանը բռնել: Ես երբ որ այս խօսքերը լսեցի, շատ տխրեցի, մտածում էի, որ դու էլ նրանց հետ ես, քեզ էլ կարող է մի վտանգ պատահել:

Սօնայի աչքերը այդ միջոցին լցոեցան արտասուքով: Նա հեկեկալով շարունակեց.

— Ես հէնց որ լսեցի, գնացի քո մօր մօտ, բոլորը պատմեցի, որ նա քեզ ասէր. մայրդ ժամանակ չգտաւ: Բայց որքա՜ն տխրեց մայրդ, Ֆարհատ, «որդիս կորաւ»... ասում էր նա:

Իմ վրդովմունքը հետզհետէ սաստկանում էր. ես չէի կարողանում հասկանալ, թէ այս ի՞նչ բան է, որ հայոց վարդապետը, որ հայոց քահանան եւ իմ քեռի Պետրոսի նման մարդը, միացած քուրդ իշխանի հետ, դաւադրութիւն էին հնարում մի քանի բարի, եւ խեղճ ժողովրդի արտասուքը սրբող երիտասարդների դէմ: Նրանք աւելի բարւոք էին համարում քուրդ իշխանի անտանելի լուծը, այն իշխանի, որի սրբապիղծ ձեռքը մուտք էր գործել մինչեւ հայոց տաճարի ներսը, որն, ինչպէս իմ աչքով տեսայ, կանգնած սուրբ սեղանի մօտ, տաճարի գանձանակի վրայ էր հսկում...

Բայց Սօնայի երկիւղը միայն իմ մասին չէր. նա ափսոսում էր եւ Կարօյին, եւ նրա ընկերներին: «Նրանք լաւ տղերք են, ասում էր նա, ես նրանց ոչ մի ժամանակ չեմ մոռանայ»: — Եւ նա խորհուրդ էր տալիս, բոլորը յայտնել նրանց, զգուշացնել, որ վտանգի չհանդիպեն: